

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ
ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱԿՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը
առարկայի դասավանդման ընթացքում

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

Վարդենիս

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑԻՉ՝

Սիրան Ստեփանյան

ԴՊՐՈՑ՝

Վարդենիսի ավագ դպրոց

ՎԱՐԴԵՆԻՍ 2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն.....
.	3
2.Դպրոցը, արժեքները.....	5
3.Հանրակրթական դպրոցի քիմիա առարկայի ուսուցման նպատակը	7
4. Արժեքային համակարգ 7
5.Եզրակացություն.....	9
6. Դասապլան1 11
7. Փորձարարական դաս 1	13
8. Դասապլան 214
9. Փորձարարական դաս 2	16
11. Անդրադարձի ձևաթուղթ- 1.....17
12.Անդրադարձի ձևաթուղթ-2.....17
13.Օգտագործված գրականության ցանկ.....18

Ներածություն

Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է, այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը: Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում, Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը. դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝ նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝ արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ, այսինքն՝ նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ, ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Անշուշտ այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն: Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են, թե որքան լավ բան է ազնվությունը, արդարությունը, տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն, սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների, ծնողների կամ շրջապատողների կողմից: Բնական է, որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում: Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը: Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական, պատմական հերոսների օրինակով, նաև ուսուցչի վարքագծով: Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին, ինչպես նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի

արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն, այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու, դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին, գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը: Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը, այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա: Դրա համար, անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր, որոնք համապատասխանում են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը: Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել, մղել որոշակի գործողությունների, ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը:

Դպրոցը, արժեքները

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարելուում ենք արժեքների ձեւավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձեւակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը:

Արժեքն երեւոյթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման:

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձեւավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլեւ անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:

Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում: Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, եւ որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձեւավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի: Ջարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր: Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ: Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում:

Հիմա անդրադառնանք բարոյականությանը: Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է: Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց: Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման: Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը: Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը: Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը:

Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը: Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել:

Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ զլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը: Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա ե՛ւ ցավ, ե՛ւ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: **Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:**

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՔԻՄԻԱ ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝

- զարգացնել սովորողների՝ բնության ճանաչողության մեթոդներին տիրապետելու, քիմիական երևույթները բացատրելու և տարբեր իրավիճակներում դրանք կիրառելու հմտություններ,
- ձևավորել սովորողների գիտական աշխարհայացի և ուսումը շարունակելու համար անհրաժեշտ հիմքեր,
- նպաստել նրանց արժեհամակարգի ձևավորմանը:

Արժեքային

համակարգ

Սույն բաղադրիչով նախատեսված համակարգն արտահայտվում է սովորողի համապատասխան գործողությունների, վերաբերմունքի և վարքի միջոցով:

1) Այս բաղադրիչի նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է՝

ա. գիտակցի սեփական մշակույթի՝ լեզվի, պատմության, արվեստի, ավանդույթների, ազգային այլ արժեքների կարևորությունն ու նշանակությունը և լինի դրանց կրողը,

բ. հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

գ. գիտակցի, որ գիտությունը, արդիական տեխնոլոգիաները, կրթությունը մեծագույն արժեքներ են ժամանակակից աշխարհում,

դ. գիտակցի, որ իր համար կարևորագույն արժեքներ են գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը,

ե. կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները, լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, բարեկիրթ,

զ. կարևորի գեղագիտական արժեքները, գնահատի գեղեցիկը, բարին և ճշմարիտը,

է. գիտակցի իր տեղն ու դերն ընտանիքում և հասարակության մեջ. լինի նախաձեռնող, դրսևորի արժանավայել պահվածք,

ը. գիտակցի ծնողների, տարիքով մեծերի և փոքրերի, ընկերների և համայնքի նկատմամբ հարգանքի դրսևորման կարևորությունը,

թ. հարգի մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները, լինի մարդասեր, հանդուրժող, քաղաքակիրթ վերաբերմունք դրսևորի ուրիշ ժողովուրդների ներկայացուցիչների և նրանց մշակույթների հանդեպ,

ժ. անաչառորեն գնահատի իր ուժերն ու կարողությունները՝ բացառելով սեփական անձի թերագնահատումը կամ գերագնահատումը,

ժա. դրսևորի աշխատասիրություն, հնարամտություն, նպատակադրվածություն, արժևորի ու գնահատի սեփական և այլոց աշխատանքը,

ժբ. մշտապես հոգ տանի իր առողջության մասին, կարևորի մարմնակրթության դերը, հետևողական լինի առողջ ապրելակերպի և անվտանգ կենսագործունեության կանոնների կիրառման գործում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արժեհամակարգ» ասվածը շատ լայն հասկացություն է և դրա մեջ ներառված են բարոյական մի շարք հատկանիշներ: Արժեհամակարգի ձևավորումը իրենից ներկայացնում է դժվարին, համբերատար աշխատանք:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, հմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի նկատմամբ ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև գուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնց թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման

մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ուսումնառության ընթացքում սոցիալական նպատակները ներառում են բոլոր անհրաժեշտ կոմպետենցիաները՝ մշակութային, սոցիալական, խոսքային-լեզվական, գիտելիքի ժողովրդավարական և այլն: Ուսուցիչը դասաժամին պետք է հետևի, որ ուսումնական և դաստիարակչական աշխատանքները մեկտեղվեն, համընթաց զարգացում ապրի և այստեղ շատ կարևոր է, որ ուսուցչի աչքը լինի ամենատես, հոգին լինի ամենազգաց, իսկ միտքը՝ ամենաընթաց

ԴԱՍԱՊԼԱՆ-1

Ուսուցիչ՝ Սիրան Ստեփանյան

<i>Առարկա՝</i>	<i>Քիմիա</i>	<i>Ամսաթիվ</i>			<i>1_ին</i>	<i>Դասարան</i>	<i>10-րդ</i>
<i>Թեմա՝</i>	Ատոմի կառուցվածքի վերաբերյալ տեսակետների զարգացումը:						
<i>Օգտագործվող Նյութեր՝</i>	Կավիճ , գրատախտակ, դասագիրք, պաստառ, պարբերական համակարգ						
<i>Դասի նպատակը՝</i>	<ul style="list-style-type: none"> • Սովորողը պետք է իմանա ատոմի կառուցվածքը՝ ըստ ժամանակակից պատկերացումների և իմանա էլեկտրոնի ակիքամասնիկային բնույթը • Իմանա ներատոմային մասնիկների անվանումները, նրանց հիմնական բնութագրերը • Կարողանա նկարագրել և բացատրել Ռեզերֆորդի կատարած փորձը 						
	Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
<i>Վերջնարդյունքները՝</i>	<ul style="list-style-type: none"> • Նկարագրել ատոմի կառուցվածքը • Գաղափար ունենա հիմնարար քիմիական հասկացությունների՝ նեյտրոնների, էլեկտրոնների և պրոտոնների մասին: • Հասկանա Ռեզերֆորդի կատարած փորձի հիմնական գաղափարը և կարևորությունը 						
<i>Գործողություններ (ժամ/տևողություն)</i>	<i>Ուսումնական գործունեություն</i>	<i>Ուսումնական գործունեություն</i>	<i>Հարցադրումներ</i>	<i>Կիրառվող մեթոդ(ներ)</i>			
	<i>Աշակերտներ</i>	<i>Ուսուցիչ</i>					

Նախապատրաստում (5 թույն)	Բացել դասագրքերը ,պատրաստվել նոր դասին ,ներկայացնել տնային աշխատանքները	Հարցեր է տալիս,լսում է աշակերտների կատարում է միավորային գնահատում: Ղասախոսության, փակ և բաց հարցերի միջոցով աշակերտներին հաղորդում է նոր նյութը		Հարցադրումների մեթոդ	
<i>Տնային առաջադրանք-3ր</i>	<i>Տնային առաջադրանքի հանձնարարում . էջ 6, վարժություն 5, էջ 9, վարժություն 2,3</i>				

Փորձարարական դաս 1



Դասի ընթացքը

Խթանում- մտազրոհ՝ ստեղծել պրոբլեմատիկ իրավիճակ, քննարկել: Այս փուլը իրականացնել հարցադրումների մեթոդով:

- Ինչու էր անհրաժեշտ ատոմի կառուցվածքի բացահայտումը
- Ինչ երևույթներ էին չբացահայտված

Իմաստի ընկալում- դասախոսության մեթոդով ներկայացնել ատոմի կառուցվածքը: Դասը ավելի մատչելի դարձնելու համար սովորողների ներկայացնել Ն. Բորի առաջարկած ատոմի կառուցվածքի մոլորակային մոդելը, ըստ որի էլեկտրոնները պտտվում են միջուկի շուրջը շրջանաձև ուղեծրով՝ օրբիտաներով, ինչպես մոլորակներն Արևի շուրջը, ինչպես նաև բացատրել ատոմի կառուցվածքի նկարագրման համար Ռեզերֆորդի կատարած գիտափորձը: Ցուցադրել թեմային վերաբերվող տեսանյութ, որը ավելի կամրապնդի ստացած նոր գիտելիքները:

Կշռադատում - Աշխակերտները լիարժեք ընկալում են նոր տեղեկատվությունը և աստիճանական ինտեգրացնում իրենց ունեցածին, նոր ստացած գիտելիքները կկարողանան կիրառել տարբեր ոլորտներում:

Գնահատում – Գնահատումը իրականացնել դասի հարցան, վաժույթունների կատարման հիման վրա:

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Սիրան Ստեփանյան

<i>Առարկա՝</i>	<i>Քիմա</i>	<i>Ամսաթիվ</i>	<i>Կիսամյակ</i>	<i>1-ին</i>	<i>Դասարան, 10-րդ</i>
<i>Թեմա՝</i>	<i>Պարբերական համակարգ</i>				
<i>Օգտագործվող Նյութեր՝</i>	<i>Կավիճ ,գրատախտակ,դասագիրք, Պաստառ, պարբերական համակարգ</i>				
<i>Դասի նպատակը՝</i>	<ul style="list-style-type: none"> • Աշակերտը պետք է կարողանա ներկայացնել պարբերական համակարգի կառուցվածքը՝ պարբերություններ խմբեր, ենթախմբեր: • Կարողանա՝ բացատրել պարբերական օրենքն ըստ ատոմի կառուցվածքի մասին նորագույն պատկերացումների: • Կարողանա մանրամասն բացատրել քիմիական տարրի ատոմի շառավիղ, էլեկտրաբացասականություն, վալենտականություն, իոնացման էներգիա հասկացությունները: 				
	<i>Ուսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ</i>				
<i>Վերջնարդյունքներ՝</i>	<ul style="list-style-type: none"> • Իմանա պարբերական համակարգի կառուցվածքը • Ներկայացնի քիմիական տարրերի հատկությունների փոփոխությունը պարբերություններում և խմբերում • Կարողանան օգտվել պարբերական համակարգից 				
<i>Գործողություններ (ժամ/տևողություն)</i>	<i>Ուսումնական գործունեություն</i> <i>Աշակերտներ</i>	<i>Ուսումնական գործունեություն</i> <i>Ուսուցիչ</i>	<i>Հարցադրումներ</i>	<i>Կիրառվող մեթոդ(ներ)</i>	

Նախապատրաստում (2 թույլ)	Վերհիշում են նախորդ դասը՝ գրատախտակին գրում են քիմիական տարրերն ու բանաձևերը	Հարցեր է տալիս, կատարում է միավորային գնահատում: Ներկայացնում է նոր նյութը, բացատրում:		Հարցադրումների մեթոդ
<i>Տնային առաջադրանք 3ր</i>	<i>Տնային առաջադրանքի հանձնարարում</i> Բացատրում է ինչպես կատարեն տնային հանձնարարությունը			

Փ ո Ր ձ ա ր ա ր ա կ ա ն դ ա ս 2

Պարբերական համակարգ

The image shows a standard periodic table of elements. At the top, it is titled "Պարբերական համակարգ" (Periodic Table). The table is color-coded by groups and includes element symbols, names in Armenian, and atomic numbers. It also features a legend for element types (metals, non-metals, metalloids, noble gases, etc.) and a scale for atomic weights.

Ղասի ընթացքը

Խթանում - մտազորի՝ ստեղծել պրոբլեմատիկ իրավիճակ, քննարկել:

- Ինչու էր անհրաժեշտ պարբերական համակարգի իմացությունը
- Ինչ երևույթներ էին չբացահայտված

Իմաստի ընկալում- դասախոսության մեթոդով ներկայացնել պարբերական համակարգը և տարրերի հատկությունները: Օգտվելով դասարանում առկա պարբերական համակարգից մանրամասն բացատրել քիմիական տարրերի հատկությունների փոփոխությունը կախված պարբերություններում և խմբերում ատոմային համարի մեծացման հետ զուգահեռ: Աշակերտների մոտ թեման ավելի ամրապնդելու նպատակով տալ տարրերի անվանումներ, և առաջարկել համեմատել նշված տարրերի հատկությունները միմյանց հետ:

Կշռադատում - Աշակերտները լիարժեք ընկալում են նոր տեղեկատվությունը և աստիճանական ինտեգրացնում իրենց ունեցածին, նոր ստացած գիտելիքները կկարողանան կիրառել տարբեր ոլորտներում:

Գնահատում – Գնահատումը իրականացնել դասի հարցան, վաժույթունների կատարման հիման վրա:

ԴԱՍԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ 1

Ի՞նչը լավ ստացվեց:

Դասաժամն օգտագործվեց արդյունավետ և նպատակային : Դասն անցավ պլանավորման համաձայն:

Ի՞նչը պլանավորվածի պես չստացվեց: Ի՞նչը կփոխեի:

Եթե բոլոր աշակերտները համացանցից օգտվելու հնարավորություն ունենային , ապա <<Քուիզիս>> առցանց գործիքի միջոցով թեստ-խաղ կկազմակերպեի:

Հասա՞րդյոք վերջնարդյունքներին: Ի՞նչպե՞ս դա իմացա:

Հասա վերջնարդյունքներին, որովհետև աշակերտները կարողացան պատասխանել թեմային վերաբերվող հարցերին, կարողացան գրել ատոմի կառուցվածքին վերաբերվող առաջադրանքները: Ներայացրեցին տարբեր տարրերի ատոմի բաղադրությունը, ատոմային զանգվածը:

Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում: Դա՞ աշխատեց:

Իմ ուշադրության կենտրոնում աշակերտների ակտիվությունն էր , ներգրավվածությունը, ինչն ապահովվեց հարցադրումների միջոցով:

ԴԱՍԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ -2

Ի՞նչը լավ ստացվեց: Պարբերական համակարգի ներկայացումից հետո, անցան խմբակային քննարկման

Ի՞նչն անակնկալի բերեց ինձ: Երեխանների ոգևորվածությունը նոր թեմայի նկատմամբ

Ի՞նչը պլանավորվածի պես չստացվեց: Տնային աշխատանքը ստուգելու փոխարեն լուծեցին 5-ական նոր վարժություն:

Հասա՞րդյոք վերջնարդյունքներին: Ի՞նչպե՞ս դա իմացա:

Հասա վերջնարդյունքին, քանի որ աշակերտները կարողանում էին ինքնուրույն համեմատել քիմիական տարրերի հատկությունները միմյանց հետ:

Ի՞նչն էր այսօր իմ ուշադրության կենտրոնում: Դա՞ աշխատեց:

Աշակերտների՝ ոգևորությունը նոր թեմայի շուրջ : Ինչպե՞ս են անդրադարձ կատարում, ի՞նչն են հիշում, ի՞նչ եզրահանգումներ են անում սովորածի շուրջ:

Օգտագործված գրականության ցանկ .

Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ